Վահան Թոթովենց

Փոքրիկ էսքիզ մի մեծ վեպի

Խաղաղություն է այժմ Արարատյան դաշտում: Աշխատանքն աճում է, դառնում է սպիտակ բամբակ և ցորենի ոսկեգույն հատիկ: Արևը բարձրանում է հայրենի կապույտ սարերից և, իբրև մի վիթխարի ու հակինթյա սափոր, շրջում է իր բերանը և թափում կարմիր գինի մեր արտերի վրա:

Անհուն խաղաղության և ծաղկած աշխատանքի օրորում լսվում են դաժան մի մելոդիայի կոտրտված ակորդները: Մանուկները, որ խաղում են արևագույն մի փխրուն հողի վրա, լսում են այդ ակորդները և ցնցվում:

Դա անցյալն է:

Եվ հիշում եմ այդ անցյալը...

* * *

Կանգնած եմ շոգենավի կամրջակի վրա և դիտում եմ Հյուսիսային սառցային օվկիանը, որի գորշ ալիքների դեմ պայքարելով, հսկայի պես հևալով, առաջ է ընթանում մեր շոգենավը:

Արևն այնքան մոտիկ է, լողում է դեպի ներքև, գալիս է դեպի երկրի ափը, վառվում է, ինչպես մի վիթխարի ծիրան հյուսիսի խտացած և ցուրտ օդում, գալիս-հասնում է բարձրաբերձ սառցալեռներին և, առանց մայր մտնելու, նորից վեր է բարձրանում սպիտակած, կաթնամաքուր փրփուրով:

Հյուսիսի լուսաբացն է:

Ծիրանագույնին հաջորդում է շուշանագույնը, վերջալույսին անմիջապես հաջորդում է արշալույսը, առանց գիշերի: Դրա համար է, որ հյուսիսում ծաղիկներ չեն բուսնում:

Հարավում արևը փոքր է, բայց կիզիչ, հյուսիսում մեծ է, բայց անկրակ:

Լայնացած բիբերով նայում եմ արևին շեշտակի, կարծես մոտիկից տեսնում եմ նրա հրեղեն ժայռերը:

Ցուրտ է, բայց իմ հոգին տաք է, հարավի վարդի նման հրավառ, պատել է ինձ մի անափ բերկրություն, հարավային ուրախություն: Հրճվանքը կախվել է իմ հոգուց, ինչպես խեժը արմավից:

Ընկերներս պարում են, պարում են ոսկորները խայտանքով լցնող պար, պարում են ցուրտ արևի դիմաց հարավային ջերմությամբ:

Մենք գնում ենք հայրենիք:

Թողել ենք մեր ետին, օվկիանի մյուս կողմը, մեծ, ցնծուն, էլեկտրական աստղերով վառված քաղաքներ, քաղաքներ՝ երկաթյա ռիթմով, քաղաքներ՝ հաճույքով հղփացած և ցոփությամբ առլեցուն, քաղաքներ՝ աղքատությամբ տանջահոծ և հարստությամբ կորաքամակ, քաղաքներ՝ թավշյա լիրիզմով, քաղաքներ՝ ոսկեգույն կեղտով, քաղաքներ՝ շողերով և արցունքներով հորդահոս:

* * *

Պատերազմ:

Ողջ երկրագունդը թնդում է ռազմով:

Գոռում են թնդանոթները, բայց մեր ականջները խուլ են, մեր խրախճանքի աղաղակն ավելի բարձր է, քան թնդանոթների գոռոցը:

Հնչել է ժամը՝ ազատելով դարավոր, հին, ստրուկ հայրենիքը:

Մենք աղաղակում ենք խոլական ճիչերով, պարում ենք մահվան առաջ:

Աշխարհի բոլոր ջրերում շոգենավեր են ընկղմվում սուզանավերից և լողացող ականներից, բայց մեր փոքրիկ նավը սավառնում է հյուսիսի զորշ ալիքների փոթորիկում, մեր սիրտն ավելի ալեկոծ է և հզոր, քան թշնամու և օվկիանի կատաղությունը:

Արևը բարձրացավ: Շողշողում են սառցալեռների գագաթները:

Մի ձեռք դիպավ իմ ուսին: Չշարժվեցի: Նայում եմ հյուսիսի արեգակին, հափշտակված նրա մաքուր կաթով:

Գնում ենք հայրենիք, շշնջաց Մեդրակն իմ ականջին:

Ես սթափվեցի, դարձա և իմ աչքերին հանդիպեցին զույգ պայծառ աչքեր:

Միայն քարտեզի վրա նայելով կարելի է զգալ, թե որտեղ ենք գտնվում, ասացի:

Մենք այժմ նավարկում ենք ուղիղ հյուսիս, ասաց Մեդրակը, պիտի շարունակենք նավարկել, մինչև ազատվենք սուզանավերի վտանգից:

Նայեցի հեռո՛ւն, հողի կարոտով:

* * *

Ահա հայրենի լեռները, կապույտ, ինչպես հարավի ծովերը:

Մեր հրականների և թնդանոթների գոռոցներից փախան բոլոր թռչունները պարտեզներից, դաշտերից և սարերից:

Ցորենի հասած արտերը ոսկուն են տալիս, բայց մնացել են անքաղ: Ժողովրդական բարիքը կոխոտում են ձիերը և վայրենացած մարդիկ, մինչդեռ ջրաղացների ջրերը հոսում են, և աղորիքները դառնում են առանց հատիկների,

մաշելով իրենք իրենց, անէացել է գյուղերի մանիշակագույն մշուշը, որովհետև ոչ մի թոնիր չի վառվում, փախել են բնակիչները երկու կողմի ատելությունից զարհուրած, ոչ մի կովի բառաչ չի ձգվում լայն դաշտերում, գիշերը լուսնի եղջյուրը հարցական կախվում է երկրի վրա:

Բայց մենք կռվում ենք ցնծությամբ:

Սրածությունը, արյան հոտը և դիակների այլանդակությունը բոցավառում են մեր ռազմական խանդը:

Ծանրակշիռ ոչ մի խոհ չի չոքում մեր ուղեղի վրա: Աշխարհի մեծ թագավորները և վարչապետները խոստացել են ազատել մեր հայրենիքը, եթե մենք՝ նրա զավակները, կռվենք խոլականությամբ:

Եվ կապույտ երազը օրորում է մեզ, կապույտը հայրենի լեռների և հարավի ծովերի:

Տառապանքի, պակուցումի, խողխողումի ոչ մի դիվային աղաղակ չի խռովում մեր արյունազանգ խրախճանքը, մինչև անգամ մայրերի աղաղակը, լացի ճիչը չի վրդովում մեր խելագարված հոգին:

Խմում ենք արյունն իբրև հին գինի:

* * *

Մանուկներ են քայլում հեռավոր ավազուտներում, մանուկներ՝ մերկ, սովալլուկ և ահաբեկված: Նրանք քայլում են ավազահողմի դեմ, նրանք անզոր են դիմադրելու հողմին և ծածկվում են ավազների տակ խեղդված ճիչերով, բայց անդորրն իջնում է նրանց անմեղ և չարչարված հոգիների վրա:

Կրակում ենք: Ամեն մի գնդակի պայթյունից բերկրում են մեր ոսկորները, ինչպես պարելիս, ատելությունից ցնծում են մեր ատամները:

Հորդառատ արյուն է հոսում հարավի անապատներում: Արյան օազիս:

Հողմածեծ, արնածեծ և բրածեծ քայլում են մարդիկ դեպի մահը իբրև հույս, իբրև խաղաղություն:

* * *

Դիմացի կապույտ լեռնաշղթայի ետին, կանաչ դաշտում, բիբլիական գետի սաղարթախիտ ափին կա պարտեզների մեջ թաղված մի քաղաք, որտեղ վարդերը բացվում են դանակով վիրավոր սրտից հոսող արյան պես կարմիր, որտեղ գիշերները մանիշակ է թափվում երկնքից ծովերի առատությամբ, որտեղ, քաղաքի կողքին, բա՜րձր, բա՜րձր լեռնադաշտի վրա, ինչպես փիրուզյա ակը մատանու, կա մի լիճ զմրուխտյա ափերով գրկված:

Այդ քաղաքը, որն այնքան հին է, որքան քարերի վրա գրված պատմությունը, Սեդրակի հայրենի քաղաքն է, որտեղ առաջին անգամ բացվել են նրա մանկության թևերը:

Այդ քաղաքի կտուրներից նա հառել է երկնքի փիրուզի մեջ ժպտացող մարգարտածաղիկներին: Այդ քաղաքում կարկաչում են աղբյուրները ադամանդյա զովությամբ:

Կռվում է Սեդրակը, նրա հոգին վառվում է աճապարանքի տենդով հասնելու այդ քաղաքը:

Ջինադադար:

Լռություն:

Լռության խորությունից, լռության հատակից լսվում է միայն կիսամեռելների տնքոցը:

Մորմոքալից մի լռություն, կոծումից պարտասած մի անդորր, հրդեհված և մոխրացած անտառի լռին ողբ:

Արևի տակ ընկած գանգերի և բյուրավոր ոսկորների անլսելի աղաղակ:

Հեռավոր անապատներից հողմը գալիս է, փռվում դաշտերում և լռում:

Թող արևը պատմի, ինչ որ տեսավ իր հրեղեն աչքերով:

* * *

Իջնում ենք ձիերից, Սեդրակը և ես: Ահա նրա հայրենի քաղաքը:

Նստում ենք բիբլիական գետի ափին:

Ալիքներ են գալիս և անց կենում:

Վեր ենք կենում և քայլում ենք դեպի քաղաքամեջ: Տների լուսամուտները, կույր աչքերի նման, հառում են տարածության մեջ:

Սեդրակը կանգ է առնում մի տան շեմքին: Նայում է ներս: Ներսից, մութ և ամայի խորությունից, մանկությունը թափահարում է սպիտակ թևերով և կանչում նրան: Սեդրակը լուռ ժպտում է: Նրա ժպիտն առկայծում է, ինչպես մի հատիկ լուսատտիկի շողը խավար անդնդում:

Կանչում է մանկությունը սպիտակ, թիթեռնիկի փրփուր թևերով:

Քայլում ենք քաղաքի այն մասը, որտեղ հավաքվել են սարերում, քարայրներում, և անտառներում վայրենացած մարդկային բեկորներ:

Սեդրակը մոտենում է նրանց, ոմանց ճանաչում է:

Մերոնցից ի՞նչ լուր:

Ոչ ոք չի պատասխանում: Սեդրակն անձկությամբ է սպասում պատասխանի, բայց ներքնապես ուրախ է, որ չեն պատասխանում: Գլուխները բարձրացնում են, նայում Սեդրակին, ոմանք ցավագին ժպտում և նորից գլուխները կախում:

Գեթ մեկնումե՞կը, աղջիկների՞ց, երեխաների՞ց...

Լռություն:

Հեռանում ենք մարդկային այդ բեկորներից, գնում-նստում մի ամայի տան դռան առաջ: Երկուսս էլ նայում ենք գետնին:

Լռությունը խորանում է, երբ մի հեռավոր ոտնաձայն է լսվում:

Գլուխս բարձրացնում եմ և նայում ամայացած, տխրած փողոցի երկայնքով: Հեռվում երևում է մի սև կետ, կարծես գալիս է, գնալով մոտենում է, գնալով արագանում:

Շուն է, մի սև և մեծ շուն: Սեդրակը գլուխը չի բարձրացնում, նրա նայվածքը գամվել է հողին: Տխրությունը թափվում է նրա վրա դեղին փոշու նման: Շունը կարծես մեզ տեսավ, որովհետև կատաղությամբ վազում է ուղիղ դեպի մեզ, հարձակվողի նման է գալիս:

Թերևս դիակներ ուտելուց խենթացած մի գազա՞ն... մտածում եմ, բայց շունը չի թողնում, որ մտածումս խորանա, որովհետև վեր եմ ցատկում ահաբեկված: Իմ հանկարծակի վեր ցատկելուց Սեդրակը սթափվում է իր խոհերից, ետև դառնում: Մի ակնթարթում փոխվում է ամեն ինչ: Սեդրակի թևերը բացվեցին մեկին ողջագուրելու պես: Շունը ցատկեց Սեդրակի գիրկը, և մարդն ու շունը կարոտով փաթաթվեցին իրար:

Շունը գրկեց Սեդրակի վիզը առաջին երկու թաթերով, իսկ Սեդրակը գրկեց նրա մեջքը: Համբուրում է մարդը անասունին և անասունը լիզում է մարդուն:

Բելլան է, մեր տան շունը, շշնջաց Սեդրակը՝ հառելով աչքերն ինձ վրա:

Ո՛չ մի մարդ իր սիրեկանին այնպես այրող կարոտով չի գրկել և համբուրել, ինչպես Սեդրակը՝ Բելլային:

Բելլան լիզում է, վնգստում, պոչը քսում Սեդրակին, մինչև անգամ թաթերի ճանկերով վիրավորում է Սեդրակի դեմքը, երեխայի նման հեկեկում, երբեմն այնպես մարդկային է նրա վնգստոցը, ինչ-որ պատմում է աղեխարշ մի պատմություն:

Սեդրակը լսում է նրան և համբուրում, նա հասկանում է Բելլայի վնգստոցի խորագույն իմաստը, հասկանում է նրա պատմության ամեն մի փոքրիկ թելը:

Ո՞ւր գնացին, ո՞ր ճանապարհով, հարցնում է Սեդրակը, ինչպես մարդուն հարցնի:

Բելլան նայում է հեռուն, աղերսագին մի ձայն է ձգում, ողբացող մի ձայն, որից այդ ամայացած փողոցում վերակենդանանում է խաղացված տրագեդիան իր բոլոր մռայլությամբ և այդ մռայլությունը կտրատող բոցավառված սրերով:

Բելլա, ի՞նչ եղավ Յուղաբերը:

Յուղաբերի անունը լսելիս Բելլան գլուխը կոխում է Սեդրակի թևերի տակ և մարդու նման լաց լինում:

Ասում է Յուղաբերը գետն է գցել իրեն... ասում է ինձ Սեդրակը:

Ապա Սրբուհի՞ն, հարցնում է Սեդրակը Բելլային:

Բելլան գլուխը դուրս է հանում Սեդրակի թևերի տակից, նորից առաջի թաթերով գրկում է Սեդրակի վիզը և բարձրացնում մի տանջակոծ մորմոք: Այդ մորմոքը, կարծես, բխում է մարդկային սրտից:

Ուրեմն նա՞ էլ, հա՞...

Բելլան կարծես «այո» է ասում:

Սրբուհին մեռել է անապատում, եզրակացնում է Սեդրակը:

Ակոբի՞կը...

Բելլան նվվում է և լիզում Սեդրակի երեսը, ձեռքերը, հագուստները:

Ինչո՞ւ չպահեցիր Ակոբիկին, կշտամբում է Սեդրակը Բելլային, չէ՞ որ դու և նա ծնվել էիք միևնույն տարում:

Բելլայի աչքերի վրա իջավ մի թանձր թախիծ, թանձր, ինչպես շաղախը:

Ասա՛, որտե՞ղ թողիր հաջի-մայրին:

Բելլան նայում է երկնքին և հանկարծ ձգում մի զարհուրելի ոռնոց: Մեր աչքի առաջ փռվում է մի ծեր և բարի կնոջ այլանդակված դիակը: Ոռնում է Բելլան, ինչպես ողբացող հողմը դեկտեմբերյան գիշերներին:

* * *

Մորմոքը, որպես թանձր մշուշ, իջնում է երկնքից և բարձրանում է հողից:

Մաղվում է մեր գլուխների վրա վերջալույսի ոսկեգույն մոխիրը իբրև նյութացած թախիծ:

Արևը, դաշունահար սրտի նման, քամեց իր արյան վերջին կաթիլները և հեռացավ դեպի ուրիշ, ավելի ուրախ մի տիեզերք...

Գիշեր...

Վիթխարի մի դագաղ՝ խոր և լուռ...

Կապույտ է այդ մութ դագաղի կափարիչը՝ աստղաբևեռներով գամված:

Գալարվում է մահվան սիմֆոնիան:

Ո՞վ է երգում այդ լուռ և անգութ մելոդիան...